

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

3.1 Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2016 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները նկարագրում են այն իրական միջավայրը, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Մյուս կողմից կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում

բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել ցուցանիշների հետևյալ հիմնական խմբերով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),
- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ),
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը, և գնաճ, որը չափվում է սպառողական գների ինդեքսով (ներառյալ ներմուծված սպառողական ապրանքների գները) (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, և ցույց է տալիս, թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 3.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 3.1. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2012	2013	2014	2015	2016
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Կանխատեսում	Կանխատեսում
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	7.2	3.3	3.5	2.5	2.2
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	25.3	22.3	21.1	20.1	20.3
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	98.1	99.1	97.9	96.3	94.5
ՀՆԱ ինդեքս դեֆլյատոր	98.8	103.4	102.7	103.2	104.0
Գնաճ միջին	2.6	5.8	3.0	4.3	4.0
Գնաճ 12-ամսյա	3.2	5.6	4.6	3.0	4.0
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-1.4	-1.6	-1.86	-3.8	-3.5
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-10.0	-7.6	-7.3	-5.8	-6.2

3.2. Համախառն առաջարկ

Երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով: Դրա փոփոխությունը նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի¹ միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունեցել որակական տեղաշարժեր ի օգուտ ավելի արտադրողական ճյուղերի:

¹ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

Տնտեսական աճին ետճգնաժամային տարիներին սկսել է առավելապես նպաստել տնտեսության արտահանելի հատվածը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

2014 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներով: 2014 թվականին 3.5% աճ է արձանագրվել, պայմանավորված հիմնականում գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերով²: Նշված ժամանակահատվածում ծառայությունների ոլորտն աճել է 5.7%-ով, որի հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.5 տոկոսային կետը, իսկ գյուղատնտեսության աճը կազմել է 7.6%, որն ապահովել է տնտեսական աճի 1.4 տոկոսային կետը: Արդյունաբերությունը և շինարարությունը նվազել են համապատասխանաբար 0.7% և 4.6%-ով՝ բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

Չնայած արտաքին աշխարհից եկող բացասական զարգացումներին՝ 2015թ. հունվար-հուլիսին տնտեսության աճի միտումը շարունակվեց: 2015 թվականի հունվար-հուլիսին գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ)³ աճ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշն աճել է 4.2%-ով: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը նպաստել են հիմնականում գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: ՏԱՑ-ի աճին դրական նպաստում են ունեցել գյուղատնտեսության (3.2 տոկոսային կետ) և արդյունաբերության (0.8 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը: Ծառայությունները և շինարարությունը տնտեսական ակտիվությանը գրեթե չեն նպաստել:

Կանխատեսում. 2015 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված կլինի գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերով: 2015 թվականին ներքին տնտեսական զարգացումների միտումները և արտաքին աշխարհից եկող զարգացումները հիմք են հանդիսացել 2015 թվականին 2.5% տնտեսական աճի կանխատեսման համար:

2016 թվականին տնտեսական աճը ավելի համեստ կլինի՝պայմանավորված հիմնականում արտաքին զարգացումներով՝ մասնավորապես Ռուսաստանի տնտեսության և պղնձի համաշխարհային գների ամկմամբ: 2016 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է ավելի ցածր 2015 թվականի համեմատությամբ՝ 2.2%-ի չափով, որին հիմնականում կնպաստեն

² Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

³ 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:


արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը: Տնտեսական աճի կանխատեսման մեջ հաշվի է առնվել Ռուսաստանի տնտեսական աճի միտումները:

Աղյուսակ 3.2.1. Տնտեսության ճյուղերի իրական աճերը 2012-2016թթ. (ավելացված արժեքով)

	2012	2013	2014	2015	2016
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
ՀՆԱ	7.2	3.3	3.5	2.5	2.2
Արդյունաբերություն	6.3	6.3	-0.7	4.1	3.7
Գյուղատնտեսություն	9.5	7.6	7.8	9.5	4.0
Շինարարություն	4.8	-7.4	-4.6	1.0	1.0
Ծառայություններ	6.3	3.1	5.7	0.6	1.3
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	9.9	3.6	1.8	-2.7	1.5

Գծապատկեր 3.2.1.-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճին ճյուղերի նպաստման չափերը:

Գծապատկեր 3.2.1. Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը.



3.2.1. Արդյունաբերություն

Չնայած ճգնաժամից հետո արդյունաբերության ճյուղը տնտեսության ամենաարագ վերականգնվող ճյուղն է եղել՝ 2014 թվականին արդյունաբերության ճյուղը նվազել է՝ պայմանավորված հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրության նվազմամբ:

2014 թվականին արդյունաբերությանը դրական է նպաստել հիմնականում մշակող արդյունաբերության աճը (6.2%): Սակայն ճյուղը նվազում է արձանագրել, որը պայմանավորված էր հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրության, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության ենթաճյուղերում արձանագրված նվազման ցուցանիշներով: Էլեկտրաէներգիայի արտադրության նվազմանը (15.5%) նպաստել է արտահանման ծավալների կրճատումը: Իսկ հանքագործական արդյունաբերության (5.0%) նվազումը համահունչ էր միջազգային շուկայում մետաղների գների նվազման միտումին⁴:

2015 թվականի արդյունաբերության ճյուղը աճել է՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերության ճյուղով: 2015 թվականի հունվար-հուլիս⁵ ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 4.1% աճ: Չնայած 2015 թվականին մետաղների գները շարունակել են նվազել՝ 2015 թվականին արդյունաբերության աճին հիմնականում նպաստել է հանքագործական արդյունաբերությունը, որն

⁴ Տես ԱՄՀ, պղնձի գները 2014թ նվազել են շուրջ 6.4%-ով:

⁵ Այս պարբերությունում ներկայացված են ճյուղի թողարկման ծավալների ցուցանիշները, որոնք տարբերվում են ճյուղի ավելացված արժեքները բնութագրող ցուցանիշներից:

աճել է 34.4%-ով: Դա պայմանավորված էր Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքներով: Մշակող արդյունաբերությունը նվազել է 3.1%-ով, որը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի (9.6%), խմիչքների (22.1%) և հիմնային մետաղների արտադրության (10.8%) ծավալների նվազմամբ: Մշակող արդյունաբերությանը միակ էական նպաստումն ունեցել է ծխախոտի արտադրության (52.1%) աճը, որն էլ պայմանավորված է դեպի Իրաք արտահանման ծավալների մեծ աճով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 2.8%-ով, որը պայմանավորված է եղել հիմնականում էլեկտրաէներգիայի արտահանման աճով:

Կանխատեսում. 2015 թվականին արդյունաբերության աճը պայմանավորված կլինի հիմնականում հանքագործական արդյունաբերությամբ: Արդյունաբերության ճյուղում տարվա առաջին 7 ամիսների տնտեսական զարգացման միտումները վկայում են, որ 2015 թվականի տարեկան աճը կկազմի շուրջ 4.1%:

2016թ. թվականին կանխատեսվում է արդյունաբերության ավելի համեստ աճ՝ պայմանավորված արտաքին և ներքին զարգացումներով: Արդյունաբերության աճը 2016 թվականին կկազմի շուրջ 3.7%⁶: Աճի դանդաղումը պայմանավորված կլինի հանքագործական արդյունաբերության 2015 թվականին բարձր բազայով, գործընկեր երկրների տնտեսական աճի, մետաղների գների նվազման կանխատեսումներով:

3.2.2. Գյուղատնտեսություն

Վերջին տարիներին գյուղատնտեսության ճյուղը բնութագրվել է բարձր աճի միտումով՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության ենթաճյուղով: Ճյուղում 2014թ. արձանագրվել է 7.6% աճ: Գյուղատնտեսության ճյուղի աճին նպաստել է հիմնականում բուսաբուծության բարձր աճը: Ընդ որում՝ բուսաբուծության ենթաճյուղի աճը պայմանավորված է եղել աճի թե էքստենսիվ, թե ինտենսիվ գործոններով:

2015 թվականի հունվար-հուլիսին գյուղատնտեսության բարձր աճի միտումները շարունակվել են: Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է 15.4%-ով⁶, որը զուգակցվել է բուսաբուծության, անասնաբուծության և ձկնորսության 28.6% 4.2% և 29.3% աճերով: Անասնաբուծության ճյուղի աճն ուղեկցվել է մսի արտադրության 4.5%, կաթի արտադրության 3.5% և ձվի արտադրության 1.3% աճի ցուցանիշներով: 2015 թվականին, նույնպես, գյուղատնտեսության աճը պայմանավորված է եղել թե էքստենսիվ, թե ինտենսիվ գործոն-

⁶ Ենթաճյուղերի նպաստումների ցուցանիշները այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

ներով: Մասնավորապես. ցանքատարածություններն աճել են շուրջ 5.5%-ով, անասնազխաքանակը մինչև 4%-ով⁷, հետևաբար մնացած մասը՝ պայմանավորված է եղել բնակլիմայական պայմանների ազդեցությամբ և արտադրողականության աճով:

Կանխատեսում. 2015 թվականին ընթացիկ զարգացումներին համահունչ կանխատեսվում է գյուղատնտեսության բարձր աճ: 2015 թվականի տարեվերջին գյուղատնտեսության իրական աճը կկազմի շուրջ 9.5%: Ընթացիկ զարգացումների համեմատ ավելի ցածր աճը պայմանավորված է նրանով, որ պտղի գծով 2015թ. աննախադեպ աճ է արձանագրվել, մինչդեռ մյուս մշակաբույսերի գծով աճն ավելի համեստ է, ինչը մինչև տարեվերջ կհանգեցնի ճյուղի աճի տեմպի նվազմանը:

2016թ. գյուղատնտեսության աճը կանխատեսվում է պատմական ներուժային մակարդակին համահունչ: 2016 թվականին ճյուղի աճը կկազմի շուրջ 4%: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացմանն ուղղված կառավարության կողմից իրականացվող⁸ ծրագրերի ակնկալվող արդյունքներն ու նախորդ տարիներին ճյուղի զարգացման միտումները:

3.2.3. Շինարարություն

Շինարարության ճյուղում գրանցվել է համեստ աճի միտում: Չնայած վերջին տարիներին տնտեսությունում իրականացված շինարարության ծավալները նվազել են, 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին ոլորտում գրանցվել է համեստ աճի միտում: 2011 թվականից շինարարության ճյուղի զարգացումները չեն դրսևորել հստակ միտումներ, ինչն արտահայտվել է ճյուղի աճի տատանողականությամբ, իսկ 2013-2014 թվականներին գրանցվել է միջինում 6% նվազում:

2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել են 0.4%-ով: Շինարարության ծավալների աճին հիմնականում նպաստել է բնակչության միջոցների և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների համապատասխանաբար 21.4% և 24.9% աճերը: Բացասական նպաստում են ունեցել համայնքների և պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների համապատասխանաբար՝ 77.6% և 8.9% նվազումները:

2015 թվականի առաջին յոթ ամիսներին տնտեսությունում իրականացված շինարարության ծավալում խոշոր մասնաբաժին են ունեցել անշարժ գույքի հետ կապված՝ (29.6%), տրանսպորտի՝

⁷ 2015թ հունվարի 1-դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների աճը կազմել է 1.6%, ոչխարներինը և այծերինը 3.9%

⁸ Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, տեղական կենսապարարտանյութերի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման ծրագրեր:

(9.5%), կացության և հանրային սննդի կազմակերպում՝ (7.9%), ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և մշակում՝ (7.3%) և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ (7.0%) գործունեության տեսակներով իրականացված շինարարության ծավալները:

Կանխատեսում. Շինարարության ճյուղի աճը կանխատեսվում է ընթացիկ զարգացումների համահունչ: Հաշվի առնելով 2015 թվականի միտումները և նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ցածր բազան ակնկալվում է, որ մինչև տարեվերջ ճյուղի աճը կկազմի շուրջ 1%: Իսկ 2016 թվականին կանխատեսվում է ճյուղի աճի պահպանում, ինչը հիմնականում կուղեկցվի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք շինարարության ծավալների կրճատմամբ և մասնավոր ներդրումների աճով:

3.2.4. Ծառայություններ և առևտուր

Վերջին տարիներին ծառայությունների ոլորտում շարունակական աճ է արձանագրվել: 2011-2014թթ. արձանագրվել են աճի համեմատաբար բարձր ցուցանիշներ՝ 2011թ.-ի 4.7%-ից 2014 թվականին հասնելով 7.8%-ի:

2015 թվականին ծառայությունները շարունակել են աճել, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով: 2015 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը (առանց առևտրի շրջանառության) 2014 թվականի համապատասխան ժամանակահատվածի համեմատ, իրական արտահայտությամբ, աճել է 2.4%-ով ինչին հիմնականում նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ ոլորտներում մատուցված ծառայությունների 62.3% աճը: Մեծ նպաստում է ունեցել նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում մատուցված ծառայությունների 10.6% աճը:

Ճյուղին բացասական նպաստում են ունեցել հիմնականում տրանսպորտի (26.3%) և տեղեկատվության ու կապ գործունեության տեսակի մասով (0.6%) իրականացված ծառայությունների ծավալների անկումը:

2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին առևտրի շրջանառության ծավալները նվազել են: 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 4.7%-ով, ինչին նպաստել են առևտրի բոլոր տեսակներով իրականացված շրջանառության ծավալների անկումը, որոնցից նշանակալի է եղել մանրածախ առևտրի շրջանառության անկումը (6.2%): 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին առևտրի ծավալները նվազումը պայմանավորված է եղել ինչպես արտաքին ազդեցություններով

պայմանավորված (դրամական փոխանցումների նվազում) իրական տնօրինվող եկամտի աննշան անկմամբ, այնպես էլ վարկավորման ծավալների իրական նվազմամբ:

Կանխատեսում. Ծառայությունների ճյուղի աճը ցածր կլինի ՀՆԱ-ի աճից: Հաշվի առնելով ընթացիկ զարգացումները և 2015 թվականի աճի միտումները մինչև տարեվերջ աճը կկազմի շուրջ 0.6%, իսկ 2016 թվականին ճյուղի աճը կլինի մի փոքր բարձր կազմելով 1.3%՝ տնօրինվող եկամտի միտումներին համահունչ:

3.2.5. Աշխատանքի շուկա

Վերջին տարիների գործազրկության մակարդակը շարունակական նվազման միտումներ է արձանագրել, չնայած այն դեռևս մնում է բավականին բարձր: Տնտեսության վերականգնմանը զուգընթաց գործազրկության մակարդակը 2010 թվականի 19.0%-ից 2014 թվականին նվազել է մինչև 17.6%-ի:


2014 թվականին արձանագրվել է միջին աշխատավարձի 8.2% աճ, իսկ 2015 թվականի հունվար-հուլիսին՝ 2015 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աշխատավարձերն աճել են 9.9%-ով: 2015 թվականի հունվար-հուլիսին պետական հատվածի աշխատավարձի աճը կազմել է 12.6%, մասնավոր հատվածինը՝ 7.0%: Ընթացիկ տարվա անցած յոթ ամիսներին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին ամսական անվանական աշխատավարձերը կազմել են համապատասխանաբար՝ 160322 և 207702 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 179963 դրամ:

Իրական աշխատավարձի աճը, 3.0% միջին գնաճի պայմաններում, 2014 թվականին կազմել է 5.1%: 2015 թվականի հունվար-հուլիսին արձանագրված 5.0% միջին գնաճի պայմաններում, իրական աշխատավարձն աճել է 4.7%-ով:

Ամփոփելով նշենք, որ 2016 թվականին տնտեսությունում կաճի արտահանելի հատվածի մասնաբաժինը: Ամբողջական առաջարկի ճյուղային կառուցվածքում ետզնաժամային տարիներին մեծացել է արտահանելի հատվածի⁹ մասնաբաժինը՝ կազմելով 2012-2014թթ. միջինում ՀՆԱ-ի 34.4%-ը: 2016թ. տնտեսությունը կշարունակի ընթանալ ետզնաժամային տարիներին նախանշած ճանապարհով և տնտեսության արտահանելի հատվածը կկազմի ՀՆԱ-ի 35.8%-ը (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 3.2.3. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2012-2016 թթ.

⁹ Արտահանելի հատվածի մեջ դիտարկվել են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:



3.3. Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը պատկերացում է տալիս տնտեսությունում եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտները ուղղվելու են սպառմանը, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման և ներդրումների մասնաբաժիններով, որոնք արտացոլվում են սպառում/ՀՆԱ և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշներով: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին, որը բնութագրվում է գլուտ արտահանման ցուցանիշով:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

3.3.1. Սպառում

2014 թվականին տնօրինվող եկամտի իրական աճին համահունչ վերջնական սպառման ցուցանիշը համեստ իրական աճ է արձանագրել՝ կազմելով 1.1%: Ընդ որում սպառման իրական աճը պայմանավորվել է ինչպես մասնավոր, այնպես էլ խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունք հանդիսացող պետական սպառման աճերով: Զուգահեռաբար, սպառման իրական

աճը զիջել է ՀՆԱ-ի իրական աճին, որի արդյունքում սպառման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013 թվականի նկատմամբ նվազել է:

2015 թվականի հունվար-հունիսին¹⁰ վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 0.4%-ով՝ պայմանավորված մասնավոր հատվածի սպառմանն ուղղված ծախսերի նվազմամբ, որի ազդեցությունը տնտեսության վրա հակազդվել է խթանող հարկաբյուջետային քաղաքականության միջոցով: 2015 թվականի առաջին կիսամյակում դրամական փոխանցումների ներհոսքի նվազմամբ պայմանավորված մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների իրական նվազման պայմաններում մասնավոր հատվածի սպառումը իրական արտահայտությամբ նվազել է 1%-ով, իսկ պետական սպառումը խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում աճել է 10.7%-ով:

Կանխատեսում. Ընթացիկ տարվա զարգացումներով պայմանավորված 2015 թվականին ակնկալվում է սպառման 0.6% իրական նվազում: 2016 թվականին ակնկալվում է, որ կարձանագրվի սպառման 0.3% աճ:

3.3.2. Կապիտալ ներդրումներ

Կապիտալ ներդրումների հետճգնաժամային նվազման միտումը շարունակվել է 2014 թվականին: 2014 թվականին կապիտալ ներդրումները նվազել են 2.6%-ով, որը համահունչ է շինարարության նվազման միտումներին: Ընդ որում մասնավոր հատվածի ներդրումները նվազել են 3.6%-ով, իսկ պետական ներդրումներն աճել՝ 3%-ով:

2015 թվականի հունվար-հունիսին կապիտալ ներդրումները նվազել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների նվազմամբ: 2015 թվականի առաջին կիսամյակում կապիտալ ներդրումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ նվազել են 1.9%-ով՝ պայմանավորված մասնավոր ներդրումների շուրջ 4.5% իրական նվազմամբ: Մասնավոր ներդրումների նվազմանը նպաստել են շինարարության աճի տեմպերի դանդաղումը, տնտեսության իրական հատվածի վարկավորման աճի տեմպերի դանդաղումը և օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազումը: Մասնավոր ներդրումների թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելու նպատակով իրականացվել է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, որի արդյունքում 2015 թվականի հունվար-հունիս ամիսներին պետական ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 16.6%-ով:

¹⁰ 2015թ. համախառն պահանջարկի առաջին կիսամյակի ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են

Կանխատեսում. Հաշվի առնելով 2015 թվականի զարգացումները՝ 2015 թվականին ակնկալվում է ներդրումների 5.1% նվազում, իսկ 2016 թվականին կանխատեսվում է ներդրումների 3.4% աճ:

3.3.3 Ջուտ արտահանում¹¹

Ջուտ արտահանման հետճգնաժամային բարելավման միտումը շարունակվել է նաև 2014 թվականին, որին զգալիորեն նպաստել է արտահանման աճը: 2014 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանումն իրական արտահայտությամբ աճել է 6.4%-ով, իսկ ներմուծումը՝ նվազել 1%-ով: Արտահանման ծավալների ավելացումը պայմանավորված է եղել համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, ինչպես նաև կառավարության կողմից արտահանողներին ցուցաբերած օժանդակությամբ: Ներմուծման կրճատումը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի աճի տեմպերի էական դանդաղմամբ և ներմուծման բարձր գներով:

2015 թվականի հունվար-հունիսին զուտ արտահանումը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված ներմուծման նվազմամբ: 2015 թվականի հունվար-հունիսին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրամային արտահայտությամբ աճել են 0.7%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի նվազմամբ, արտաքին շուկաներում արտահանողների գնային մրցունակության թուլացմամբ և դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի արժեզրկմամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումը իրական արտահայտությամբ նվազել է 20.4%-ով, ինչը պայմանավորված է եղել փոխարժեքի արժեզրկմամբ պայմանավորված ներմուծման գների աճով, վերաարտահանվող ապրանքների աճի տեմպի նվազմամբ, նախորդ տարի ներմուծված մեքենաների քանակի բարձր աճով, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամտի իրական նվազմամբ:

Կանխատեսում. 2015 թվականին արտաքին պահանջարկի վարընթաց միտումների և փոխարժեքի արժեզրկման պայմաններում ակնկալվում է արտահանման շուրջ 10.6% իրական աճ, իսկ ներմուծման՝ 7.7% իրական նվազում: 2016 թվականին կանխատեսվում է արտահանման և ներմուծման համապատասխանաբար 1.8% և 1.7% իրական նվազում:

Աղյուսակ 3.3.1. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, տոկոս

	2012	2013	2014	2015*	2016*
--	------	------	------	-------	-------

¹¹ Այս բաժնում ներկայացված են արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները դրամային արտահայտությամբ:

	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Սպառում	7.7	1.7	1.1	-0.6	0.3
Ներդրում	0.5	-9.1	-2.6	-5.1	3.4
Արտահանում	8.4	8.6	6.4	10.6	-1.8
Ներմուծում	-2.8	-2.1	-1.0	-7.7	-1.7
Ընդամենը ՀՆԱ	7.2	3.3	3.5	2.5	2.2

Աղյուսակ 3.3.2. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2012	2013	2014	2015*	2016*
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Սպառում	98.1	99.1	97.9	96.3	94.5
Ներդրում	25.3	22.3	21.1	20.1	20.3
Զուտ արտահանում, այդ թվում՝	-20.8	-19.8	-18.4	-13.3	-13.8
Արտահանում ¹²	27.6	28.4	28.5	30.4	30.1
Ներմուծում ³	48.4	48.2	46.9	43.7	44.0
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100

3.4. Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների (ներառյալ ներմուծված) զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

3.4.1. Սպառողական գներ

2012-2014 թվականներին վարվել է ընդլայնող դրամավարկային քաղաքականություն՝ թուլացնելով և մեղմելով դրամավարկային պայմանները, համախառն պահանջարկի ընդլայնմանը և գնաճի տեմպերի վերականգնմանը նպաստելու համար: Սակայն, 2014 թվականի տարեվերջին

¹² Ներառված են նաև ծառայությունները

ճշգրտվել է դրամավարկային քաղաքականության ուղղությունները՝ ֆինանսական և արժույթային շուկաներում ձևավորված լարվածության մեղմման նպատակով:

Հետագայում, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացված և հաշվեկշռված իրականացման շնորհիվ գնաճը մեղմվել է և տարեվերջին մոտեցել թույլատրելի միջակայքի սահմանին: Փաստացի զարգացումների արդյունքում 2014 թվականի երկրորդ կիսամյակում դիտվել է գնաճային միջավայրի աստիճանական ընդլայնում, որը ինչ-որ չափով գերազանցել է սպասելիքները՝ պայմանավորված տարեվերջին աշխարհում և, հատկապես տարածաշրջանում խորացած աշխարհաքաղաքական հիմնախնդիրներով: 2014 թվականի դեկտեմբերին արձանագրվել է 3.0% գնաճ՝ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.1%-ի համեմատ), ձևավորելով գնաճային միջավայր, ինչի պարագայում 12-ամսյա գնաճը ավելացել է և ամսվա վերջին կազմել՝ 4.6%: Ընդ որում, աճի գերակշռող մասը՝ շուրջ 2.0 տոկոսային կետը, տեղի է ունեցել դեկտեմբերին, երբ արտերկրից և ՀՀ հիմնական գործընկեր Ռուսաստանից արտարժույթային փոխանցումների զգալի կրճատման պարագայում, ՀՀ արտարժույթի շուկայում արձանագրվեց դրամի կտրուկ արժեզրկում: Վերջինս անմիջապես անդրադարձավ ապրանքային շուկայի վրա՝ ընդլայնելով գնաճային միջավայրը և ձևավորելով գնաճային սպասումներ:

ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 4.6% 12-ամսյա գնաճը առավելապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) ապրանքախմբում արձանագրված 6.3% գնաճով (նպաստումը գնաճին՝ 3.4 տոկոսային կետ), իսկ ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրվել է 1.6% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է 3.0% սակագների հավելած (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ):


2014 թվականի միջին գնաճը կազմել է 3.0%, որը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 2.2% աճով (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 1.7% աճով (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 5.1% աճով (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ):

2015 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ սպառողական շուկայում դեռևս պահպանվել է թիրախից բարձր գնաճային միջավայրը: 2015 թվականի հուլիսին 12-ամսյա գնաճը կազմել է 5.0%, որը պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) ապրանքախմբում արձանագրված 5.2% գնաճով (նպաստումը գնաճին՝ 2.6 տոկոսային կետ), ոչ

պարենային ապրանքների գների՝ 5.8% (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 3.7% (նպաստումը գնաճին՝ 1.1 տոկոսային կետ) աճերով: 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ դրամավարկային դիրքը պահպանելու նպատակով բարձրացվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 10.5 և անփոփոխ է թողել դրամավարկային պայմանները, քանի որ հակակշռելու էր օգոստոսից էլեկտրաէներգիայի սակագնի հնարավոր բարձրացման գնաճային ազդեցությունը:

Կանխատեսում. Տարվա երկրորդ կիսամյակում 12-ամսյա գնաճը կնվազի և կգտնվի թույլատրելի միջակայքի ներքևի հատվածում: Այդուհանդերձ կպահպանվեն արտաքին և ներքին տնտեսությունից եկող ռիսկերը, որոնց դրսևորման պարագայում հնարավոր է գնաճային միջավայրի ընդլայնում և դրամավարկային քաղաքականության ուղղությունների համապատասխան ճշգրտում՝ ուղղված միջնաժամկետ հատվածում գնաճի նպատակի իրագործմանը:

Գծապատկեր 3.4.1. 2000-2016 թվականների գնաճի (ՍԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատոր: 2014 թվականին ՀՆԱ ինդեքս դեֆլյատորի աճը կազմել է 27%: ՀՆԱ դեֆլյատորի աճը հիմնականում պայմանավորված էր ծառայությունների և արդյունաբերության դեֆլյատորների աճով:

2015 թվականի վեց ամիսների տվյալներով ՀՆԱ դեֆլյատորը ցածր 3.5 տոկոս աճ է ունեցել, որին մեծ նպաստում է ունեցել ծառայությունների դեֆլյատորի աճը: ՀՆԱ դեֆլատորի ցածր մակարդակի ձևավորմանը նպաստել է գյուղատնտեսության դեֆլյատորի 10.8% անկումը:

Կանխատեսում. Մինչև տարեվերջ, կանխատեսվում է գրանցվածից ավելի ցածր՝ 103.2 տոկոս ՀՆԱ դեֆլյատոր, իսկ 2016 թվականին, դեֆլյատորը կկազմի շուրջ 104%:

3.5. Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունը և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները՝ որպես ֆինանսական միջոցների ձևավորված գին:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է, թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Եթե տոկոսադրույքները բարձր են տրված ռիսկայնության աստիճանի պարագայում, ապա տնտեսությունում առկա է գնաճային ճնշումներ կամ սպասումներ և հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայում ձևավորվում է փողի առաջարկը, պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման համար ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

3.5.1. Փողի զանգված

2012-2014 թվականներին տնտեսության աճի կայունացման զուգահեռ փողի զանգվածի միջին աճը կազմել է 14.2%: Ընդ որում նույն ժամանակահատվածի համար փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը միջինում աճել է 0.2%, դրամային ավանդները՝ 15.5%, իսկ արտարժութային ավանդները՝ ընդամենը 22.5%: 2015 թվականի հուլիսին փողի զանգվածն աճել է 10.1% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

2012-2014 թվականներին փողի բազայի միջին աճը կազմել է 10.5%: Այսպիսով նշված ժամանակահատվածի համար ԿԲ-ից դուրս կանխիկը և պարտադիր պահուստները դրամով միջի-

նում աճել են, համապատասխանաբար՝ 1.4% և 30.5%, իսկ պարտադիր պահուստները արտար-
 ժույթով միջինում աճել են 39.5%: 2015 թվականի հուլիսին փողի բազան աճել է 12% նախորդ տարվա
 նույն ժամանակահատվածի նկատմամբ: 2014 թվականին նկատվել է առևտրային բանկերի կողմից
 ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերի (դրամով և արտարժույթով տրամադրված)
 աճի դանդաղում: Այսպես, 2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա
 համեմատ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերն
 ավելացել են ընդամենը 82.9 մլրդ դրամով, կամ 10.4%-ով¹³ (2013 թվականի դեկտեմբերի վերջի
 դրությամբ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 192.6 մլրդ դրամ կամ 12%) և ՀՆԱ-ի մեջ
 կազմել 45.2% (2013 թվականին արձանագրված 39.3%-ի դիմաց):

3.5.2. Բանկային ակտիվներ՝ վարկեր, ավանդներ

ՀՀ ֆինանսական շուկայում 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին նկատվել է 2014 թվականի տարեվերջի լարվածության զգալի թուլացում: 2015 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ վարկերն ավելացել են 205.1 մլրդ. դրամով կամ 10.9%: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները (դրամով և արտարժույթով) 2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 145.1 մլրդ. դրամով, կամ շուրջ 9% և ՀՆԱ-ի մեջ կազմել 36.3%: 2015 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավանդներն աճել են 184.6 մլրդ. դրամով (11.1%-ով):

Աղյուսակ 3.5.2. Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2012-2014 թվականներին (մլրդ դրամ)

	2012	2013	2014
Վարկեր	1605.7	1798.3	2188.4
Վարկերի կշիռը ՀՆԱ-ում, % ¹⁴	37.6	39.5	45.2
Ավանդներ	1212.1	1612.4	1757.5
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում, %	28.4	35.4	36.3

**Տվյալների աղբյուրը ՀՀԿԲ*

¹³Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

¹⁴Ցուցանիշների համադրելիությունը ապահովվելու տեսանկյունից վարկերը և ավանդները պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը 2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 12.53%՝ 2013 թվականի նույն ժամանակահատվածի 10.42%-ի համեմատ: Իսկ առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը 2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 16.21%՝ 2013 թվականի 15.04%-ի համեմատ: Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը 2015 թվականի հուլիսին կազմել է 14.44%՝ 2014 թվականի 10.27%-ի համեմատ, իսկ դրամով տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 18.18%, 2014 թվականի՝ 15.76% նկատմամբ:

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքների միջև սպրեդը 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին 2014 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 3.7 տոկոսային կետ:

Աղյուսակ 3.5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2012-2014 թվականներին և 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին

	2012		2013		2014		2015						
	VII	XII	VII	XII	VII	XII	I	II	III	IV	V	VI	VII
Վարկերի միջին տոկոսադրույք *	16.6	16.0	16.1	15.0	15.8	16.2	16.8	18.7	19.1	17.1	17.7	17.3	18.2
Ավանդների միջին տոկոսադրույք *	10.1	10.1	10.1	10.4	10.3	12.5	12.1	14.0	15.2	13.3	15.3	14.8	14.4

* Հաշվարկված է մինչև 1 տարի ժամկետով՝ բացառությամբ ցպահանջի, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար:

*Տվյալների աղբյուրը ՀՀ ԿԲ

3.6. Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ իրականացվող իրական գործարքները՝ ներմուծում, արտահանում, տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ),

- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական բնույթի գործարքները (կապիտալի ներհոսքն ու արտահոսքը)):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է: Դրա հետ մեկտեղ փոքր բաց տնտեսություններին հատկանշական է բարձր զգայունությունը համաշխարհային տնտեսության զարգացումներից (միջազգային բորսաներում գնանշվող ապրանքների գներ, գործընկեր երկրների տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսության զարգացման միտում և այլն):

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

3.6.1. Ընթացիկ հաշիվ

2014 թվականին ընթացիկ հաշիվը շարունակել է ՀՆԱ-ի նկատմամբ նախորդ տարիներին ձևավորված կրճատման միտումը՝ 0.3 տոկոսային կետով բարելավելով նախորդ տարվա մակարդակը և կազմելով ՀՆԱ-ի 7.3% (2013թ-ին՝ 7.6%): Ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը դրական նպաստում է ունեցել հիմնականում արտահանման ծավալների առաջանցիկ աճը: Ընդ որում՝ արտաքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղման (հիմնականում՝ զարգացող երկրներում), համաշխարհային շուկայում պղնձի գների անկման հետևանքով 2014 թվականին արձանագրվել է արտահանման աճի տեմպի դանդաղում կազմելով՝ 3.8% (1698.1 մլն ԱՄՆ դոլար): Իսկ ներմուծումը կազմել է 3753.6 մլն ԱՄՆ դոլար¹⁵՝ աճելով 0.7%-ով: Մյուս կողմից, տարվա արդյունքներով նվազել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և աշխատողների վարձատրության եկամուտները՝ հակազդելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը: Աղյուսակ 3.6.1-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տե՛ս նաև Գծապատկեր 3.6.1.-ը):

¹⁵ ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալներով (ՖՕՔ)

3.6.2. Արտաքին առևտուր¹⁶

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2014 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրել է աճի տեմպի դանդաղում, աճելով՝ 1.8%-ով: Տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճ. արտահանումն աճել է 4.6%-ով՝ կազմելով 1547.3 մլն դոլար, իսկ ներմուծումն աճել է 0.9%-ով՝ կազմելով 4424.4 մլն դոլար:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2015 թվականի առաջին յոթ ամիսների արդյունքներով նախորդ տարվա համեմատ կրճատվել է 19.9%-ով (2657.3 մլն ԱՄՆ դոլար): Նախնական պաշտոնական տվյալների համաձայն հունվար-հուլիս ամիսներին տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման ծավալների 0.1% աճ և ներմուծման ծավալների 26.7% անկում: 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին ձևավորվել է տնտեսության արտաքին հատվածը բնութագրող ցուցանիշների վատթարացում: Ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) տարվա յոթ ամիսների նախնական տվյալներով բարելավվել է և կազմել 684.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 43.8%-ով, որը պայմանավորված է արտահանման աննշան աճով և ներմուծման էական կրճատումով:

3.6.3. Ներմուծում

2014 թվականին ներմուծումը հիմնականում ունեցել է աճի տեմպի նվազման միտում: 2014 թվականի ներմուծման դոլարային արտահայտությամբ աճի տեմպը նվազել է՝ հիմնականում պայմանավորված աշխատողների դրամական փոխանցումների կրճատման հաշվին բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ: 2014 թվականի ներմուծման ընդհանուր 0.9% աճի ամենաբարձր՝ 0.7 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 0.4 տոկոսային կետը՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման աճով:

2015 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում արձանագրվել է ներմուծման անկում բոլոր ապրանքախմբերով՝ կազմելով 26.7%: Նվազման ամենաբարձր՝ 4.9 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբի ներմուծման նվազումով՝ շարունակելով 2013 թվականին սկիզբ առած բացասական նպաստման միտումը, ինչը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի նվազմամբ: Ներմուծման նվազմանը 4.8 և 4.4 տոկոսային

¹⁶ Արտաքին հատվածի 2015 թվականի ընթացիկ ժամանակաշրջանի ցուցանիշների ստորև ներկայացված գնահատականները նախնական են և հիմնված են ընթացիկ տարվա վեց ամիսների ճշգրտված պաշտոնական տվյալների վրա, որոնք դեռևս ենթակա են լրացուցիչ վերանայման (կապված ՀՀ և ԵԱՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրի վերաբերյալ մաքսային մարմիններին ներկայացվող նոր վիճակագրական ձևի ոչ բոլոր ռեսպոնդենտների կողմից ներկայացմամբ):

կետերով նպաստել են համապատասխանաբար «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Վերգետնյա օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի նվազումը:

Կանխատեսում. 2015 թվականին սպասվում է ապրանքների ներմուծման 19.9% նվազում (դոլարային արտահայտությամբ), ինչը հիմնականում պայմանավորված կլինի արդեն իսկ ձևավորված միտումներով: 2016 թվականին ներմուծման աճի միտումը կվերականգնվի և աճը կկազմի 2.5%՝ պայմանավորված հիմնականում ներքին տնտեսության զարգացումներով և տնօրինվող եկամտի աճով:

3.6.4. Արտահանում

Չնայած 2014 թվականին դոլարային արտահայտությամբ ներմուծման աճի համեմատ արտահանման աճի առաջանցիկ լինելուն՝ արձանագրվել է արտահանման աճի տեմպի դանդաղում: 2014 թվականին արտահանման 4.6% աճի ամենաբարձր՝ 2.9 տոկոսային կետը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 1.9 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման համապատասխանաբար՝ 22.5% և 9.0% աճերով: Արտահանման աճին 1.9 տոկոսային կետով հակազդել է կառուցվածքում մեծ կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների նվազումը (համապատասխանաբար՝ 5.3% և 2.1%-ով):

2015 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում նախնական տվյալներով ՀՀ արտահանումը աճել է 0.1%-ով՝ կազմելով 847.1 մլն ԱՄՆ դոլար: 2015 թվականի հունվար-հունիս ամիսներին արտահանման աճին ամենամեծ 6.1 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը: Արտահանման աճին 2.6 տոկոսային կետով նպաստել են «Բուսական ծագման արտադրանք» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերը: Արտահանման աճին 4.2 տոկոսային կետով հակազդել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը:

Կանխատեսում. Գործընկեր երկրների ընթացիկ և սպասվող անորոշ զարգացումները հիմք են հանդիսացել առավել զգուշավոր կանխատեսման համար: 2015 թվականին սպասվում է դոլարային արտահայտությամբ 4.5% (անվանական արժեքով) արտահանման նվազում, ինչը տեղի է ունենալու միջազգային շուկաներում մետաղների գների նվազման սպասումներով և ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկրում՝ ՌԴ-ում բնակչության եկամուտների անկման հետ կապված արտահանման

վերաբերյալ սպասումների վատատեսությամբ: 2016 թվականի համաշխարհային թողարկման աճին և ՀՀ կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում տարվող քաղաքականության ուղղությանը համահունչ ակնկալվում է, որ արտահանումը կաճի 1.3% (դոլարային արտահայտությամբ):

Գործընկեր երկրներ. Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին. համաշխարհային տնտեսությունում նկատվող միտումներով (մասնավորապես, զարգացող տնտեսություններից ներդրումների նկատելի արտահոսք դեպի զարգացած տնտեսություններ) և տարածաշրջանային ռիսկերով (ՌԴ-ի տնտեսական զարգացման վատատեսություն) պայմանավորված արտարժույթի ներհոսքը դեպի հանրապետություն դանդաղեց՝ նպաստելով նաև տնօրինվող եկամուտների նվազմանը և ՀՀ տնտեսական աճի դանդաղմանը:

Արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը. Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով հիմնական պահանջարկը՝ 2014 թվականի ՀՀ արտահանման 4.6% աճի շուրջ 14.0 տոկոսային կետը ապահովել են հետևյալ 3 երկրները՝ Չինաստան՝ 6.9, Գերմանիա՝ 4.9, Իրաք՝ 2.2 տոկոսային կետերով: Նշված երկրներ արտահանվող հիմնական ապրանքատեսակներն են՝ հանքաքար, խարամ, մոխիր, մետաղներ, այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից, ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ, մոմանյութեր և այլ ապրանքներ: Մյուս հիմնական գործընկեր երկրների նպաստումը արտահանման աճին 2014 թվականի արդյունքներով հիմնականում բացասական էր:

2014 թվականի երկրի արտաքին սպառողական պահանջարկի ներմուծման հաշվին բավարարմանը գործընկեր երկրներից ամենամեծ նպաստումն են ունեցել՝ Ռուսաստանը (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ, հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր, հացահատիկներ), Չինաստանը (0.7, միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր, էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ծայնագրող ապարատներ և դրանց մասեր, կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր), որոնք ապահովել են 2014 թվականի ընդհանուր ներմուծման 0.9% աճի 2.9 տոկոսային կետը: Գործընկեր երկրներից ՀՀ ներմուծման աճին հիմնականում բացասական նպաստում են ունեցել Ռումինիան՝ 1.8, Բուլղարիան՝ 1.0, Հարավային Աֆրիկան՝ 0.9, Ուկրաինան՝ 0.6, Շվեյցարիան՝ 0.6 և Իսրայելը՝ 0.4 տոկոսային կետով:

Վերը նշված միտումների արդյունքում 2014 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ԱՊՀ և ԵՄ երկրների մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար 28.8% և 26.8%: 2014

թվականին ՀՀ խոշոր յոթ առևտրային գործընկեր երկրների շրջանակում ընդգրկված էին Չինաստանը (առևտրաշրջանառության 9.8%), Գերմանիան (7.4%), Իրանը (4.9%), ԱՄՆ-ն (3.7%), Իտալիան (3.6%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (24.0%) և Ուկրաինան (3.6%):

2015 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ՀՀ արտահանման 0.1% աճի 9.3 տոկոսային կետը ապահովել են այլ երկրներից 3 երկները՝ Շվեյցարիան՝ 3.3, Իրաքը՝ 3.1, Չինաստանը՝ 2.9 տոկոսային կետերով: ՀՀ արտահանման մեջ ընթացիկ տարվա յոթ ամիսների արդյունքներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման կշիռները նվազել են համապատասխանաբար 6.9 և 1.1 տոկոսային կետերով, իսկ այլ երկրների կշիռը ավելացել է 8 տոկոսային կետով: Ընթացիկ տարվա յոթ ամիսների արդյունքներով ներմուծման 26.7% անկմանը հիմնականում նպաստել են Չինաստանը՝ 2.5, Գերմանիան՝ 2.4, Շվեյցարիան՝ 2.4, Ռուսաստանը՝ 2.1, Թուրքիան՝ 2.1, Ճապոնիան՝ 1.6, Ուկրաինան՝ 1.5 տոկոսային կետով:

3.6.5. Փոխարժեք

ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումը ԱՄՆ դոլարի նկատմամբ պահպանվում է: Վերջին տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը շարունակաբար արժեզրկվել է: 2014 թվականին փոխարժեքը շարունակել է դրսևորել նույն վարքագիծը՝ նախորդ տարվա միջինի նկատմամբ արժեզրկվելով 1.5%-ով, որին հիմնականում նպաստել են համաշխարհային տնտեսության և տարածաշրջանային զարգացումները:

Համաշխարհային, տարածաշրջանային և ներքին տնտեսության զարգացումների ներքո 2015 թվականի առաջին կիսամյակում նկատվում էր ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման տեմպերի դանդաղման միտում, սակայն սկսած հուլիս ամսից նկատվում է հակառակ միտումը: Ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 476.93 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արժեզրկվելով 13.8%:

Իրական արդյունավետ փոխարժեքը շարունակում է մնալ զգալի արժևորված՝ բացասական ազդեցություն թողնելով երկրի ընթացիկ հաշվի ձևավորման վրա: ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ նաև արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք¹⁷) ընթացիկ

¹⁷Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը


տարվա առաջին յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժևորվել է մոտ 11.5%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժևորվել է հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, ընդ որում վերոնշյալ «գամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները դոլարի նկատմամբ արժեզրկվել են ավելի շատ (շուրջ 25%-ով), քան ՀՀ դրամը: Իրական արդյունավետ փոխարժեքը 2015 թվականի հունվար-հուլիս ամիսներին, հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արժևորվել է 8.7%, ընդ որում՝ իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման միտումը նկատվում է դեռևս 2013 թվականի տարեվերջից:

Կանխատեսում. 2015 թվականին ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի 5.8% մակարդակ, իսկ 2016 թվականին այն կկազմի 6.2%:

Աղյուսակ 3.6.6. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2011	2012	2013	2014	2015	2016
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-10.4	-10.0	-7.6	-7.3	-5.8	-6.2
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	-4.3	-4.5	-3.2	-3.3	-2.7	-2.9

Գծապատկեր 3.6.7. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, 2000-2016թթ.



կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն՝ հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2015թ. սեպտեմբերի 18-ի դրությամբ տվյալները:

3.7. Պետական հատված

3.7.1. Հարկաբյուջետային հատված

Հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում, նպատակ է դրվել չափավոր նպաստել տնտեսության վերականգնմանը, չխաթարելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը:

2014 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.6%՝ նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.1 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 22.0%-ը՝ մնալով նախորդ տարվա նույն մակարդակին: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 6.85%, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները՝ 6.3%:


ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2014 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.4 տոկոսային կետով և կազմել 25.5%: ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2014 թվականին կազմել է ՀՆԱ-ի 1.9%, նախորդ տարվա 1.6% դիմաց:

Հարկաբյուջետային քաղաքականությունը 2015 թվականին եղել է խթանող:

2015 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 0.8% աճ, իսկ հարկային եկամուտների մասով՝ 0.04% նվազում:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2015 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 15.2%-ով, որից ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է աճ՝ 14.85%-ով, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 22.8%-ով:

Գծապատկեր 3.7.1. Հարկաբյուջետային ազդակը¹⁸ 2008-2016 թվականներին



Կանխատեսում. 2015 թվականի հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումների հիմքում ընկած են ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների 21.1 տոկոս և պետական բյուջեի պակասուրդի 3.8 տոկոս մակարդակի ապահովման ուղենիշները, որի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի խթանող, իսկ 2016 թվականինը՝ չեզոք:

Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	4266.5	4555.6	4843.2	5122.4	5442.8
Իրական ՀՆԱ ինդեքս	107.2	103.3	103.5	102.5	102.2
ՀՆԱ դեֆլյատոր	98.8	103.4	102.7	103.2	104.0
Գնաճ (12-ամսյա) %	3.2	5.6	4.6	3.0	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	2.6	5.8	3.0	4.3	4.0

¹⁸Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է:

<u>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների</u>					
ՀՆԱ	7.2	3.3	3.5	2.5	2.2
Արդյունաբերություն	6.3	6.3	-0.7	4.1	3.7
Գյուղատնտեսություն	9.5	7.6	7.8	9.5	4.0
Շինարարություն	4.8	-7.4	-4.6	1.0	1.0
Ծառայություններ	6.3	3.1	5.7	0.6	1.3
Զուտ հարկեր	9.9	3.6	1.8	-2.7	1.5
<u>ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը</u>					
Վերջնական սպառում	7.7	1.7	1.1	-0.6	0.3
Պետական	-1.4	7.6	6.4	5.1	-6.8
Մասնավոր	9.1	0.9	0.4	-1.5	1.5
Կապիտալի համախառն կուտակում	0.5	-9.1	-2.6	-5.1	3.4
Պետական	-20.9	-6.9	3.0	-9.0	-6.0
Մասնավոր	5.8	-9.5	-3.6	-4.4	5.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում	8.4	8.6	6.4	10.6	-1.8
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-2.8	-2.1	-1.0	-7.7	-1.7
<u>Արտաքին հափված</u>					
Ապրանքների և ծառայությունների արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	2918	3156	3319	3226.3	3215.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	5131	5365	5468	4634.3	4693.0
Ապրանքների արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	1516	1636	1698	1621.7	1643.5
Ապրանքների ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	3628	3728	3754	3005.8	3081.0
Ապրանքների արտահանման աճ, %	5.9	7.9	3.8	-4.5	1.3
Ապրանքների ներմուծման աճ, %	2.4	2.8	0.7	-19.9	2.5
Ընթացիկ հաշիվ, մլն. ԱՄՆ դոլար	-1058	-845	-849	-620.0	-667.0
<u>ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս</u>					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-20.8	-19.9	-18.5	-13.3	-13.8

Ապրանքների և ծառայությունների արտահանում	27.5	28.4	28.5	30.4	30.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	48.3	48.2	47.0	43.7	44.0
Առևտրային հաշիվ	-19.9	-18.8	-17.7	-13.0	-13.5
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-10.0	-7.6	-7.3	-5.8	-6.2
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	4.2	5.0	3.3	5.1	5.3

4. ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ¹⁹ և ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է զարգանալ անհամաչափ տեմպերով և էական անորոշությունների ներքո, ինչը պարտադրում է գնահատել հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում բյուջեի բազիսային ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի, այդ թվում՝ մուտքերի, ելքերի և հնարավոր լրացուցիչ ֆինանսավորման պահանջի վրա:

Հայաստանը լինելով փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր առավել զգայուն է արտաքին հատվածից փոխանցվող ազդակների նկատմամբ: Համաշխարհային տնտեսական աճի դանդաղման և կանխատեսումների նվազման ուղղությամբ շարունակ կատարվող ճշգրտումները վկայում են նվազող արտաքին պահանջարկի մասին: Դեռևս առարկայական են համաշխարհային տնտեսական իրավիճակի վատթարացման ռիսկերը: Այս առումով ՀՀ տնտեսության և պետական բյուջեով նախատեսվող հոսքերի վրա հիմնական ազդեցությունները կարող են ի հայտ գալ ինչպես զարգացող երկրներում տնտեսական աճի դանդաղման, այնպես էլ Եվրամիության երկրներում դեռևս շարունակվող անհամաչափ զարգացման, ներքին խնդիրների և ճգնաժամի վերջնական կարգավորման հեռանկարների բարձր անորոշության արդյունքում: Նման իրավիճակը ուղղակիորեն և անուղղակիորեն կարող է անդրադառնալ ՀՀ տնտեսական աճի, գնաճային միջավայրի, փոխարժեքի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա, որոնք էական ազդեցություն են ունենում բյուջեի հոսքերի վրա:

Արժույթի միջազգային հիմնադրամի «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ» հրապարակումների 2015 թվականի հուլիսյան գնահատականների համաձայն՝ համաշխարհային տնտեսական աճի համար կանխատեսվում է 2014 թվականի համեմատ ավելի ցածր մակարդակ: Չնայած տնտեսական աճի կանխատեսումների նվազման ուղղությամբ վերջին ճշգրտումը էական չի եղել՝ 2015 թվականի համար կազմելով 0.2 տոկոսային կետ, այդուհանդերձ նոր կանխատեսումները շարունակում են կախված մնալ որոշ ենթադրությունների իրագործումից, որոնց գծով անորոշությունները դեռևս շատ բարձր են:

Նախ, Հյուսիսային Ամերիկայի տնտեսական ակտիվության անսպասելի դանդաղումը, ինչը հանդիսացել է զարգացած տնտեսությունների աճերի կանխատեսումների վերանայման հիմնական

¹⁹ Բյուջեի ծրագրի ռիսկերը դրանք այն հավանականային գործոններն են որոնց ի հայտ գալը կնշանակի բյուջեի ծրագրային ցուցանիշներից շեղումներ: Ռիսկերը պայմանականորեն բաժանված են երկու խմբերի՝ մակրոտնտեսական ռիսկերի և հարկաբյուջետային ռիսկերի: Առաջին խմբի մեջ ներառված են մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերը, իսկ երկրորդ խմբի մեջ՝ պետական բյուջեի հոսքերի տեղի ունենալու հետ կապված ռիսկը:

պատճառը, հանգեցրել է համաշխարհային աճի տեմպերի կանխատեսումների դեպի ներքև ճշգրտմանը: Չնայած ԱՄՆ-ի սպառման և ներդրումների արագացման հիմնական շարժիչները՝ աշխատավարձի աճը, ֆինանսավորման հեշտ պայմանները, վառելիքի ցածր գները, աշխատուժի շուկայի վիճակը և բնակարանային շուկայի կայունացման միտումները մնացել են անփոփոխ:

Երկրորդը՝ **Եվրոգոտու երկրների տնտեսությունները** վերականգնման ճանապարհին են՝ ներքին պահանջարկը և ինֆլացիան աճում են, եվրոգոտու մի շարք տնտեսությունների աճի կանխատեսումները վերանայվել են դեպի վեր, սակայն եվրոգոտու տարբեր երկրներում այդ գործընթացն ընթանում է անհամաչափ:

Երրորդը՝ զարգացող շուկայական տնտեսությունների աճը կանխատեսվում է, որ կնվազի 2014 թվականի 4.6%-ի փոխարեն 2015 թվականին կազմելով 4.2%: Աճի տեմպերի նման դանդաղումը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ ապրանքների գների անկմամբ, արտաքին ֆինանսական պայմանների խստացմամբ և կառուցվածքային սահմանափակումներով, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոններով՝ ԱՊՀ-ի և արևելյան մի շարք երկրների տնտեսություններից եկող բացասական ազդակներով: 2016 թվականին ակնկալվում է զարգացող և զարգացած տնտեսությունների աճ: Այսպիսով, **տնտեսական աճի նվազման ուղղությամբ արտաքին ռիսկերը** շարունակում են գերակշռել և կարող են **ուղղակի և անուղղակի ազդեցության** ճանապարհներով փոխանցվել ՀՀ տնտեսություն, ընդ որում անուղղակի ճանապարհով ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցությունները կլինեն համեմատաբար ավելի մեծ: Այս պայմաններում խիստ կարևորվում է կառուցվածքային փոփոխությունների իրականացումը՝ տնտեսական աճի ներուժի ամրապնդման և աճին ավելի մեծ կայունություն հաղորդելու համար: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների հետաձգման կամ քաղաքականության փոփոխության միջոցով ոչ բավարար չափով արձագանքման պայմաններում համաշխարհային տնտեսական աճի դանդաղումը կարող է փոխանցվել ՀՀ տնտեսություն հետևյալ հիմնական ճանապարհներով.

- **Ուղղակի ճանապարհով** ազդեցությունները պայմանավորված կլինեն Եվրամիության (հիմնականում եվրոգոտու) հետ առկա երկկողմանի առևտրային կապերի պայմաններում արտահանման տեմպերի կրճատմամբ, Եվրամիությունից կապիտալ ներդրումների ծավալների կրճատմամբ և Եվրամիությունից ստացվող աջակցության ծավալների նվազմամբ: Որքան երկարաձգվեն եվրոգոտու կառուցվածքային խնդիրների համատեղ լուծումները, այնքան ավելի երկարատև կլինեն այս տարածաշրջանի որոշ երկրների տնտեսական անկումները և գործազրկության աճի

գործընթացները: Արդյունքում՝ վերոնշյալ երեք ուղիներով այն կազմի Հայաստանի տնտեսական ակտիվության վրա:

Տնտեսական աճի տեմպերի դանդաղումը, մյուս կողմից, կարող է ազդել նաև ընդհանուր համաշխարհային պահանջարկի վրա: Եթե այս պայմաններում ԱՄՆ-ում դրամավարկային քաղաքականության կարգավորման նպատակով երկարաժամկետ տոկոսադրույքների սպասվող բարձրացումը տեղի ունենա ավել արագ, ապա համաշխարհային պահանջարկի տեմպերի նվազումը կարող է առավել զգալի լինել: Այս երևույթները կազդեն նաև միջազգային շուկայում ապրանքների պահանջարկի, հետևաբար դրանց միջազգային գների վրա՝ նվազման ուղղությամբ: Նշված զարգացումները կհանգեցնեն ՀՀ առևտրի պայմանների վատացմանը և արտահանման դոլարային ծավալների անկմանը՝ նվազեցնելով տնտեսական աճի տեմպերը:

Կարող է շարունակվել նաև օտարերկրյա ներդրումների ներհոսքի դանդաղումը Հայաստան: Արտարժույթային ներհոսքի կրճատման և ԱՄՆ-ում սպասվող դրամավարկային քաղաքականության կարգավորման նպատակով եկարաժամկետ տոկոսադրույքների բարձրացման ու դոլարի ուժեղացման պարագայում կարող են ի հայտ գալ նաև փոխարժեքի արժեզրկման ռիսկեր: Մյուս կողմից, արտահանման կրճատման արդյունքում ներքին պահանջարկի անկումը և միջազգային շուկաներում ապրանքների գների նվազումը կարող են հանգեցնել ներքին շուկայում գների նվազման: Այս երկու գործընթացների միաժամանակ տեղի ունենալու պարագայում ներքին տնտեսության գնային ցուցանիշների վրա ազդեցությունը կլինի չեզոք:

- ՀՀ տնտեսության վրա գլոբալ զարգացումները կունենան նաև **անուղղակի ազդեցություն**. Ռուսաստանում տնտեսական ակտիվության կտրուկ նվազում է նկատվել՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածության հետևանքով պահանջարկի հետագա թուլացման հետ: Բացի դրանից Եվրամիության տնտեսական աճի տեմպերի դանդաղումը և Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը դոմինոյի էֆեկտով կարող են տարածվել հատկապես Եվրամիության հետ երկկողմանի առևտրային խոշոր շրջանառություն ունեցող երկրների վրա, այդ թվում նաև Ռուսաստանի վրա, որտեղից գալիս են հիմնական կապիտալ և տրանսֆերտային հոսքերը Հայաստան: Այս ճանապարհով ՀՀ տնտեսության վրա ազդեցությունը կարող է համեմատաբար ավելի նշանակալի լինել: Եվրամիությունից Ռուսաստանի տնտեսության վրա ազդեցությունը հիմնականում կփոխանցվի նավթի գների նվազման ճանապարհով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային պահանջարկի նվազմամբ: Նավթի գների նվազման արդյունքում կարող են էլ ավելի նվազել Ռուսաստանի տնտեսական անկման տեմպերը, ինչը կպայմանավորի նաև

Հայաստան ներհոսող մասնավոր տրանսֆերտների և ուղղակի ներդրումների աճի տեմպերի դանդաղումը: Արդյունքում, վերջինս ազդեցություն կունենա ինչպես ներքին պահանջարկի նվազման և տնտեսական աճի տեմպերի դանդաղման, այնպես էլ փոխարժեքի վրա:

Աշխարհաքաղաքական վիճակը, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունները, ինչպես նաև հարևան երկրների հետ քաղաքական հակադրությունները ևս էական ռիսկեր կարող են առաջացնել տնտեսական աճի ապահովման տեսանկյունից:

Տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերն են.

- Ներքին միջավայրից բխող հիմնական ռիսկը բնակլիմայական անբարենպաստ պայմանների դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրումն է: Կանխատեսվող հորիզոնում կառավարությունը շարունակելու է գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումների իրականացումը, սակայն բնակլիմայական անբարենպաստ պայմանները կարող են լրացուցիչ ռեսուրսների ներդրման պահանջ առաջացնել՝ դանդաղեցնելով կառավարության բարեփոխումները²⁰, որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:
- Ամբողջական առաջարկի և պահանջարկի տեսանկյուններից գնահատված ՀՆԱ-ի իրական աճի վրա էլեկտրաէներգիայի գների բարձրացման ազդեցության գնահատականները վկայում են, որ այս գործոնը կարող է շեղումներ մտցնել 2016 թվականի տնտեսական աճի բազիսային կանխատեսման սցենարում՝ աճի տեմպերի նվազման ուղղությամբ:
- Եթե շարունակվի 2015թ. դիտարկվող տնտեսության վարկավորման ցածր մակարդակը, այն նույնպես կարող է հանգեցնել տնտեսական աճի նվազման:
- Արտաքին ռիսկերը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական զարգացումներով կարող են հանդես գալ Ռուսաստանի տնտեսական աճի սպասվածից ավել դանդաղեցմամբ ինչի արդյունքում հնարավոր է տրանսֆերտների կանխատեսվածից պակաս ներհոսք, որն էլ կարող է սահմանափակել ներքին պահանջարկը:
- Փոխարժեքի արժեզրկման հետ կապված ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել արտաքին պարտքի սպասարկման լրացուցիչ բարդությունների, արտահանման և ներմուծման կառուցվածքային տեղաշարժերի:

²⁰ Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար, կառավարությունը պարտավորված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտանդվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

- Ռեսուրսների, հիմնականում գունավոր մետաղների համաշխարհային գների սպասվածից ավել անկումը, որը կարող է հանգեցնել արտահանման ծավալների կրճատմանը:

Տնտեսական աճի ավելացման ուղղությամբ ռիսկերը հետևյալն են.

- Արտաքին ռիսկերը պայմանավորված են Ռուսաստանի տնտեսական զարգացումների սպասվածից ավելի լավ զարգացումներով:
- ՀՆԱ-ի աճի ուղղությամբ ներքին ռիսկերը պայմանավորված կլինեն ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքով: Եթե հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման, ինչպես նաև արդյունաբերական արտահանման խթանման քաղաքականության ուղղությամբ արդյունքները արտահայտվեն ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:
- ՌԴ կողմից Եվրոպական երկրներից ներմուծվող որոշ ապրանքների վրա դրված սահմանափակումների պահպանման պարագայում հնարավոր է արտահանման ավելացում:
- ՌԴ-ում արձանագրվող բարձր գնաճի շարունակականության պայմաններում, կբարձրանա հայկական ապրանքատեսակների գնային մրցունակությունը ՌԴ ապրանքային շուկաներում, որի պարագայում հնարավոր է արտահանման ավելացում:

Իրական տնտեսական աճի կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ վերոնշյալ միտումների ազդեցության քանակական գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող տնտեսական աճի հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես գծապատկեր 4.1 և աղյուսակ 4.1):

Գծապատկեր. 4.1. Իրական ՀՆԱ կուտակային աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը 2016 թվականին ըստ եռամսյակների²¹



Իրական ՀՆԱ-ի աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ուղղությամբ ռիսկերը ակնհայտորեն նվազման ուղղությամբ են: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4.1. Իրական ՀՆԱ կանխատեսումների հավանականային բաշխումը 2016 թվականին

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2016 I եռ.	2016 II եռ.	2016 III եռ.	2016 IV եռ.
1	2	3	4	5
-1-1%	0.26	0.29	0.26	0.23
1-3%	0.46	0.35	0.30	0.26
3-5%	0.21	0.16	0.16	0.17

Աղյուսակ 4.1.-ի 1-ին սյունը ներկայացնում է տնտեսական աճի հավանականային միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ 2016 թվականի կանխատեսվող եռամսյակների:

Պարզության համար աղյուսակում ներկայացվել են միայն ամենահավանական 1-3% տնտեսական աճի կենտրոնական միջակայքը և հարակից՝ համապատասխանաբար -1-1% և 3-5%

21 Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է „4.1.2. Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ռիսկերի ազդեցության գնահատումը” բաժնում:

տնտեսական աճերի միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 66.0%-ը, այսինքն, ընդհանուր հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի -1-5 տոկոս միջակայքում, կազմում է 66.0%: Ակնհայտ է, որ վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 1-3% միջակայքում տնտեսական աճի ձևավորվելու հավանականությունը 2016 թվականի ավարտին ամենաբարձրն է (Գծապատկեր 4.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 4.1-ում՝ հոծ նշումով):

Վերը նկարագրված ռիսկերը կարող են շեղումներ մտցնել բյուջեի բազային սցենարի հիմքում ընկած կանխատեսումներում և ենթադրություններում, ինչն էլ կարող է անդրադառնալ բյուջեի նախատեսված հոսքերի վրա:

4.1. Պետական բյուջեի կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Պետական բյուջեի կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է մակրոտնտեսական հետևյալ ռիսկերի վրա:

4.1.1. Մակրոտնտեսական ռիսկերի գնահատումը

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներն իրագործվելիս ի հայտ են գալիս որոշ շեղումներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից²², նոր ի հայտ եկող երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: Բյուջեի ծրագրի կատարման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ բյուջեի ծրագրված սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախորդ տարիներին պետական բյուջեների հիմքում դրվող ՀՆԱ կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, հետզհետե 2010-2014թթ. փաստացի ՀՆԱ իրական աճերը միջին հաշվով շեղվել են կանխատեսվածից **1.7%**: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ

²² Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ իրական աճի կանխատեսված մակարդակից 1.7 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

Որպես կանոն բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են նաև արտաքին գործոններից (օրինակ՝ ներքին տնտեսության գնաճը միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված Կառավարության և Կենտրոնական Բանկի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի գների հնարավոր փոփոխությունները): Պատմականորեն՝ որոշակի գործոնների ազդեցությամբ, տեղի են ունենում շեղումներ այդ ենթադրություններից, ինչն էլ շեղումներ է մտցնում բազիսային կանխատեսումներում: Օրինակ՝ կանխատեսման համար հիմք է ընդունվում ԿԲ-ի կողմից գնաճի կանխատեսված կենտրոնական արժեքը, սակայն իրականում տարբեր գործոնների ազդեցությամբ կարող են տեղի ունենալ նշված արժեքից շեղումներ, ինչը կարող է շեղել նաև բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները:

2. 1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Որպես գնաճի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ԿԲ-ի կողմից դրամավարկային ծրագրերում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը: Այս պահին գործող դրամավարկային ծրագրով այդ չափը 2015թվականի համար գնահատվում է կանխատեսման կենտրոնական արժեքի հավասարաչափ շեղում՝ **+/-1.5 տոկոսային կետի չափով** (այսինքն գնաճի ներքին սահմանը՝ 2.5% է, վերին սահմանը՝ 5.5% է): 2016 թվականի գնաճի ռիսկերը գնահատվում են համաչափ բաշխված, այս պայմաններում հիմք է ընդունվում նպատակից շեղման չափը՝ նվազման ուղղությամբ: Գնաճը կարող է ազդել ինչպես ուղղակի և անուղղակի հարկերի մուտքերի վրա, այնպես էլ բյուջեով նախատեսված ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի վրա: Գնային ցուցանիշների հնարավոր նվազման պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն, մյուս կողմից բյուջեի ծախսային մասում տնտեսումներ տեղի կունենան ապրանքների գնման ծախսերի գծով: Արդյունքում գների նվազման ռիսկի զուտ ազդեցությունը գնահատվում է 1.7 մլրդ. դրամ՝ ֆինանսական պահանջի նվազեցման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

Մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, իսկ կենտրոնական բանկը և ֆինանսների նախարարությունը փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում, այլ յուրաքանչյուր տարվա բյուջեի հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակի պահպանման ենթադրություն: Ընդ որում փոխարժեքի ուղղակի ազդեցություն տարեկան բյուջեի կատարողականի վրա առկա չէ²³՝ միասնական գանձապետական հաշվին դրամաշնորհների և վարկերի ստացման, արտաքին տոկոսավճարների և վարկերի մարման, ինչպես նաև անդամավճարների մասով: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն բյուջեի եկամուտների վրա՝ սահմանին գանձվող հարկային եկամուտների և ծախսերի վրա՝ պետության կողմից ներմուծվող ապրանքների գնման մասով:

Հաշվի առնելով, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0%-ը, որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի առավելագույնը 5% արժեզրկումը: Պետական բյուջեի՝ արտարժույթի տատանումներով պայմանավորվող արտարժույթային ներհոսքը ավելին է քան արտահոսքը, որով էլ պայմանավորված փոխարժեքի արժեզրկման պարագայում բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պահանջը կնվազի: Փոխարժեքի 5.0% արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում այլ հավասար պայմաններում բյուջեն կարող է ունենալ 10.0 մլրդ. դրամ լրացուցիչ զուտ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ են կազմում պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, ապա անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետզհետեամային 2010-2014թթ. ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը 8.1% սահմաններում է եղել, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: Ծրագրվածից 8.1%պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում բյուջեի հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է ավելի քան 10.8 մլրդ. դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

²³ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ Կենտրոնական Բանկի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի դրույթների համաձայն բյուջեի տարեկան մուտքերն ու ելքերը կենտրոնական բանկը՝ որպես կառավարության ֆինանսական գործակալ, իրականացնում է բյուջեի ծրագրում դրված փոխարժեքով:

4.1.2. Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ռիսկերի ազդեցության գնահատումը

Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական բնույթի վերոնշյալ ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 4.1.2.1. Հարկային մուտքերի վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների գծով ռիսկերի ազդեցության գնահատումը²⁴

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ. դրամ
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում	
1. Կանխատեսվածից 1.7% ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-7.3
2. Ենթադրությունների հետ կապված ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում, այդ թվում	
2.2.1. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-1.7
1.2.2. Փոխարժեքի առավելագույնը 5.0% արժեզրկման ռիսկ	+10.0
1.2.3 Ներմուծման 8.1% նվազման ռիսկ	-10.8
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	-11.9

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 11.9 մլրդ. դրամ: Մյուս կողմից, կարելի է նկատել, որ հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը ավելի էական կլինի, եթե ի հայտ գան միայն ՀՆԱ-ի և ներմուծման գծով ռիսկեր:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն

²⁴ ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների վրա ազդող գործոնի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:


Աղյուսակ 4.1.2.2. Հարկային եկամուտները զգայունությունը՝ հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.26	0.09	0.19	0.08

Ակնհայտ է, որ եթե դիտարկվում ենք կանխատեսվածից 1 տոկոս շեղման ազդեցությունը, ապա հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում իրական ՀՆԱ փոփոխությունը և փոխարժեքի փոփոխությունը:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականները իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես գծապատկեր 4.1.2.1 և աղյուսակ 4.1.2.3)²⁵:

Գծապատկեր 4.1.2.1. Անվանական հարկային եկամուտների կուտակային աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը 2015 թվականին ըստ եռամսյակների²⁶



²⁵ Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:

²⁶ Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Հավելվածում

Ակնհայտորեն, կենտրոնական կանխատեսումներից հարկային եկամուտների աճի շեղման ուղղությամբ ռիսկերն առավելապես նվազման ուղղություն ունեն: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 4.1.2. Անվանական հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը 2016 թվականին

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2016 I եռ.	2016 II եռ.	2016 III եռ.	2016 IV եռ.
1-3%	0.26	0.25	0.23	0.23
3-5%	0.46	0.37	0.33	0.30
5-7%	0.21	0.23	0.24	0.22

Աղյուսակ 4.1.2.3-ի 1-ին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի հավանականային միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյունները նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ 2016 թվականի կանխատեսվող եռամսյակների:

Պարզության համար աղյուսակում ներկայացվել են միայն ամենահավանական 3-5% հարկային եկամուտների աճի միջակայքը և հարակից՝ համապատասխանաբար 1-3% և 5-7% միջակայքերը: Ընդհանուր հավանականությունը, որ հարկային եկամուտների աճը կգտնվի 1-7% միջակայքում, կազմում է ավելի քան 70%: Ակնհայտ է, որ վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 3-5% միջակայքում հարկային եկամուտների աճի ձևավորվելու հավանականությունը 2016 թվականի ավարտին ամենաբարձրն է (Գծապատկեր 4.1.2.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 4.1.2.3-ում՝ հոծ նշումով): Միաժամանակ, հաշվի առնելով նվազման ուղղությամբ ազդող ռիսկերի ազդեցության գերակշռությունը, ավելի մեծ է կենտրոնական միջակայքից ներքև, քան թե վերև ձևավորվելու հավանականությունը:

**Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային
բաշխման գծապատկերի կառուցումը**

Իրական ՀՆԱ և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ Կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր են հաշվի առնվել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ կանխատեսումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի են առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը կառուցվել է իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկը 2016 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

4.1.3. Պետական բյուջեի հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատումը

Պետական բյուջեի հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատականը, որը ներկայացված է աղյուսակ 4.1.3.1-ում ներառում է ինչպես հարկային եկամուտների, այնպես էլ պետական բյուջեի այլ հոսքերի վրա մակրոտնտեսական ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները:

Աղյուսակ 4.1.3.1. Հարկային եկամուտների և պետական բյուջեի այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատականը²⁷

Ռիսկի տեսակը	Ֆինանսավորման պահանջ (-պահանջի մեծացում, + պահանջի նվազում)
	մլրդ. դրամով
Ընդհանուրը	-18.5
1. Կանխատեսածից 1.7% ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-7.3
2. Ենթադրությունների հետ կապված ռիսկեր, այդ թվում	-11.2
2.1. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	+1.7
2.2. Փոխարժեքի առավելագույնը 5% արժեզրկման ռիսկ	+3.0
2.3. Ներմուծման 8.1% նվազման ռիսկ	-10.8
2.3. Բյուջեի արտաքին հոսքերի չստացման ռիսկեր, այդ թվում՝	-5.1
ԾԻԳ-երի կատարողականի գծով	-5.1

Ամփոփելով նշենք, որ ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկի ազդեցությունը 2016 թվականի բյուջեի վրա գնահատվում է շուրջ 7.3 մլրդ. դրամ՝ լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ավելացման ուղղությամբ, գների, փոխարժեքի, ներմուծման և արտաքին վարկերի չստացման գծով ենթադրությունների ռիսկերի ընդհանուր ազդեցությունը գնահատվում է ավելի քան 11.2 մլրդ. դրամ՝ լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ավելացման ուղղությամբ: Այսպիսով, կանխատեսումների և ենթադրությունների ընդհանուր ռիսկը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնահատվում է շուրջ 18.5 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի շուրջ 0.34 տոկոսը:

²⁷ Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

4.2 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

1. Ռիսկերի կառավարման հնարավորությունները

1.1 Ռիսկերի արագ ախտորոշում

Հնարավոր ռիսկերի արագ ախտորոշումը թույլ կտա խուսափել լրացուցիչ կորուստներից՝ արագ արձագանքման միջոցով: Ախտորոշման համար առկա են նաև համապատասխան ուղղորդող տնտեսական, ֆինանսական ցուցանիշներ և ինդեքսներ, այդ թվում՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը, ԿԲ-ի կողմից հաշվարկվող առաջնորդող ինդեքսները և հարցման արդյունքները:

1.2 Ռիսկերի դրսևորման դեպքում լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ծածկման հնարավորություններ

Վերոնշյալ ռիսկերի դրսևորման արդյունքում բազային սցենարի համեմատ լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կարող է ծածկվել հետևյալ արտաքին և ներքին աղբյուրների հաշվին:

- **Արտաքին աղբյուրներ**

- Եվրագեսի հակաճգնաժամային ֆոնդից Հայաստանին հատկացվող բյուջետային աջակցության վարկի ծավալների մեծացում:

- **Ներքին աղբյուրներ**

- Լրացուցիչ պետական արժեթղթերի տեղաբաշխում, որը կզուգորդվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի երկրորդային շուկայում մասնակցության մեծացմամբ,
- 2015 թվականի տարեկան ծախսերի խնայողության հաշվին միասնական հաշվի մնացորդի օգտագործումը:

- Չեն բացառվում նաև ռիսկերի դրսևորման պարագայում պակասուրդի մեծացումը հնարավորինս զսպելու նպատակով ծախսերի գծով կասեցումներ (օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասության սահմաններում): Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների ռիսկերի դրսևորման պայմաններում առավելագույնը հնարավոր կլինի կասեցնել

2016 թվականին նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 5 տոկոսը կամ շուրջ 68.7 մլրդ դրամ:²⁸

2. Ռիսկերի կառավարման մեխանիզմները և գործիքակազմը

Հնարավոր ռիսկերի կառավարման համար արդեն առկա են համապատասխան մեխանիզմներ և գործիքներ, ինչպես նաև դրանց կիրառման փորձ: Աշխարհում և Հայաստանում կիրառված գործիքները, այդ թվում ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի, ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 2.1: Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում (+,- նշանակում է կիրառվել է կամ չի կիրառվել Հայաստանում)

Աշխարհում	Հայաստանում ²⁹
Ֆինանսական գործիքներ	
Աջակցություն ֆինանսական կազմակերպություններին, խնդրահարույց ակտիվների ետգնմամբ	-
Աջակցություն իրական հատվածի խոշոր (համակարգաստեղծ) ընկերություններին	+
Աջակցություն իրական հատվածի ՓՄՁ-ներին	+
Գործազուրկների օգնության ծրագրի իրականացում	+
Սոցիալական բնույթի ծախսերի պահպանում	+
Ֆինանսական համակարգի կողմից տնտեսության տարբեր ոլորտներին տրվող վարկերի վերաֆինանսավորում	+
Ոչ ֆինանսական գործիքներ	
Բանկային տոկոսադրույքի իջեցում	+
Հիփոթեկային գործակալությունների ազգայնացում	-
Պետբյուջեի միջոցներով հիմնադրամների կամ այլ ֆինանսական միջնորդների ստեղծում ֆինանսական օժանդակության	+

²⁸ Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում 2009 թվականին հնարավոր է եղել կասեցնել բյուջեով ծրագրավորված ծախսերի ընդհանուր գումարի մոտ 5 տոկոսը (ոչ գերակա համարվող ծախսեր):

²⁹ - նշանակում է, որ տվյալ գործիքները Հայաստանում կիրառելի չեն, + նշանակում է, որ տվյալ գործիքները կամ առկա են կամ էլ կիրառելի են կարճ ժամկետում՝ մեխանիզմները մշակված են և փորձարկված: Աջակցություն ֆինանսական կազմակերպություններին, խնդրահարույց ակտիվների ետգնման և հիփոթեկային գործակալությունների ազգայնացման միջոցառումները Հայաստանի համար կրառելի չեն եղել քանի, որ ֆինանսական հատվածի խնդիրները կանխարգելվել են ժամանակին և ճգնաժամային ազդեցությունից էական վնասներ չեն կրել:

նպատակով	
Կրթական ծրագրերի իրականացման ակտիվացում միջին խավի եկամուտները պահպանելու նպատակով	+
Հարկային դաշտի թուլացում՝ հատկապես փոքր տնտես- վարողների համար	+
Ներդրումների խրախուսում տարբեր օրենսդրական փոփոխություններով	+

Նշված գործիքների կիրառությունը ապացուցեցին ճգնաժամին հակազդելու արդյունավետությունը, ինչով էլ պայմանավորված կշարունակվի նույն գործիքակազմի կիրառումը հնարավոր ճգնաժամին հակազդելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ երկիրը արդեն ունի նշված գործիքների կիրառության փորձառություն, կառավարությունը հնարավորություն կունենա առավել արագ և ժամանակին ապահովել նշված գործիքների կիրառությունը:

3. Ռիսկերի ազդեցության մեղմման հնարավորությունների ընդհանուր գնահատականը

Այսպիսով տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերի դրսևորման պարագայում Կառավարության քաղաքականության հիմնական նպատակադրումը պետք է լինի սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը, ինչը կպահանջի ՀՆԱ-ի 0.34-0.5 տոկոսը: Մյուս կողմից, նման չափի պահանջի բավարարումը՝ լրացուցիչ միջոցների ներգրավման պայմաններում կառավարության պետական պարտքի և նախորդ տարվա ՀՆԱ-ի միջև օրենքով սահմանված առավելագույն 50 տոկոս հարաբերակցությունը չի պահպանվի:³⁰

Հետևաբար, հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում առաջնային պետք է լինի զսպել հնարավոր պարտքի մեծացումը և ռիսկերի չեզոքացումը հնարավորինս իրականացնել ծախսերի գծով կասեցումների ճանապարհով:

³⁰ Համաձայն պետական պարտքի մասին ՀՀ օրենքի, կառավարության պետական պարտքը նախորդ տարվա ՀՆԱ-ի նկատմամբ 50%-ը գերազանցելու պարագայում, պակասուրդը պետք է չգերազանցի վերջին երեք տարիների ՀՆԱ միջին մակարդակի 3%-ը: